

LIPANAN

Journal Arménien

POLITIQUE - LITTÉRAIRE

RÉDACTION - ADMINISTRATION
Place des Canons 9, rue d'Isly

« L'ÉCHO »

IMPRIMERIE-PROPRIÉTAIRE

J. ADJEMIAN

ԼԻՓԱՆԱՆ

Ազգային - Բաղաձայնական - Գրական

ԱՆԿԱՍ ԶԱՅԱԹԵՐԹ

(لبنان) جريدة ارمنية سياسية ادبية اقتصادية حرة

ՇԱՐԱԹ

15

ՆՈՅՆՍԵՐ

1930

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն

ՍՈՒՐԻԱ	ՏՐԻԲ.	Վ. ԳՐԱՄ.	ԵՆԱՄՈ.
350	175	125	
ԱՐՏԱՍՏԱՄԱՆ 6	4	2 ՏՈՒՄ	

ՈՎ Ե Յ ՈՒ Դ Ա Ն

Մեր յարգելի պաշտօնակիցը «Ազգակ» իր Հոկտ. 28ի առաջնորդող յօդուածը պատկած է ՅՈՒՆԻՍ փերտառութեամբ, ջանալով այս սեպտեմբեր տեղաւորել, առանց խղճարութեան, «ԱՆ» մէջ գտնուող հաստատարի մը գլուխը, երեւան եկած ըլլալով անոր ազգագրաւ լրտեսութիւնը հաստատող աւելի մերկացած փաստերով:

Կը զարմանանք թէ պր. յօդուածագիրը, շատ գնահատելի ազգա-սիրութեամբ մը, տեղական ժողովուրդին հակահայ զրգուցմանց Սուրիա-հայութեան հանդիսան ու անգործութիւնը վտանգող ձեռնարկներու միակ պատասխանատուը կը նկատէ հայտնուն, սակայն իրականին մէջ անանուն, հայ լրտեսները որոնք մամուլով թէ բերանացի մամուլութիւններ կ'ընեն:

Մեր յարգելի աշխատակիցը կարող է երկարել իր անորակելի ամ-բաստանութեանց շղթան, կատաղութիւնէն փոքրիկ, մինչեւ իսկ լուտանք-ներ, անէծքներ տեղացեան իր մտացածին Յուդայներու հասցէին, սակայն ինչպիսիք է գիտնալ թէ այդ Յուդայները գոյութիւն ունին մեր մէջ և եթէ գոյութիւն ունին, որոնք են ճշմարիտ Յուդայները:

Բարեբաղդաբար թէ զօրազգաբար, «Ազգակ»ի Յուդայաբանութեան ամենատարբեր շղթանին կը գուցադիպի «Եփրատ»ի խմբագիր Պր. Սեդրակ Կէ-պէնիսին Սուրիայէն հեռացուելու պարագան:

Կը հարցնենք թէ Պր. Կէպէնիսն ալ մատնանշուած Յուդա հատ-ուածի կը պատկանի. եթէ պատասխանը հաստատական է, ուրեմն Ազգակ քերականական վերլուծութիւն մը մէջ կը գտնուի փոխանակ հաստատանքի ու հաստատեցողի ձեւը գործածելով: Իսկ եթէ սխալ է մեր ենթադրութիւնը, այն տուեալ յարձակումը կատարուած պէտք է ըլլայ Հայ Լիպանական Կու-սակցութեան զէմէ, որ իր ծրագրով ու կուսակցական հուշագրով ոչ մի-այն հեռու է միւս երկու քոյր կուսակցութեանց սկզբունքներէն ալ քա-ջարձակապէս անհաշտ են յուդայական ազգագրաւ ոգիին հետ:

Իսկ եթէ կատարուած յարձակումը Ս. Դ. Հնչակեան Կուսակցու-թեան զէմ է, զարձակ կը մնայ անարգարանով, վասնոր առիկայ ալ զօրակ է անշատողական ձգտումը և իր հակառակորդները յուդայելու ստորա-քարէ ոգիին:

Չենք ուզիք բացարձակապէս արդարացնել ամէն հայ, որ կուսակ-ցութեան կամ գաղափարի ալ պատկանի ան, երբ կը ձգտի յուդայել ազ-գային հաւաքականութեան և սակայն չենք ներքին նաեւ որ յուդայութեան ու արարքը ընդհանրացուի պարզապէս հակառակորդները արատաւորելու և զոտազան յետին միտքերով:

Նմանօրինակ պարագաներու առթիւ կը հարկադրուինք գիրար վի-րուորել, գիրար նախասեղ, թշնամի պաշտօնատուներէն թշնամիներ ստանա-լու, ի նպատակ թշնամիի թմբուկ վարելու անքաւելի մեղքով յարձակում-ներ գործել, առանց խորհելու թէ երբ մեղք մէկը, բնականաբար քաղա-քական անհաշտութիւն ու իրատես հայեացքներէ մղուած, զէպէրը կը ներ-կայացնէ իրենց իրական գոյններով, ուրիշ մը առանց նոյն հայեացքները ու-նենալու, պարզապէս մասնաւոր նկատուի միւր հետապնդելով, նպատաւոր կ'արտայայտուի տարբեր ուղղութեամբ:

Աւելի պարզ խօսիմք երբ «Հայ թերթիկներ» թրքական բրորա-կանտ ընելու, այսինքն թրքական թմբուկ վարելու մտացածին թերթ-թեամբ յուդայներու համահաւասար կը նկատուին, աւելի լուրջ թերթեր, որ-պիսին է «Ազգակ» և ուրիշներ. նոյն թմբուկահարութիւնը, իրական գեո-նի վրայ, կը կատարեն առանց խղճարութեան, քրտական բրորականութի համար, առանց խորհելու թէ այդ կրիպ արտայայտութիւնը հակասութեան մէջ կը գնէ վերինք, ընթերցողին ու հաստատ համագումար տալով թէ երբ կարգ մը «թերթիկներ» թրքական շահերը պաշտպանելով, կ'արժանանան իրական վարձատրութեան, անհրաժեշտ է որ նոյն վարձատրութեան պէտք է արժանանան նաեւ քրտական թմբուկ վարողները:

Յուդայներ են արգարե թրքական շահերը պաշտպանողներ իսկ ա-ռաւելապէս Յուդայներ են քայքայողներ շահերը պաշտպանել, ազգային արժանապատուութեան զէմ մեղանշողներ: Ինչ մի քանի ամիս առաջ Պէյ-րութի հասարակութիւնը տեղական Ելեւնուպատ Դատարանի ներքինքնե-րուն իսկ բողոքական աշխարհ թերթերու սխալակներուն մէջ ակնթար-նու-ղան անարեւելական ձեռնարկի մը, ծրագրուած Քէսապի մէջ, Տիրուէնի մը մէջտեղէն վերցնելու. իսկ ինչ ըսել Հայկական Երկրակալութիւններ-րուն, պարզապէս «Եփրատ»ը լռեցնելու շարժմանութեամբ զարբնուած:

Մեր հակամարտութենէն ծագում առած հակահայ բրորականութիւնը ար-ծարձուած է, եթէ ոչ անգործութեամբ զէթ մեծաւ մասամբ, կարգ մը անպատասխանատու կամ միջնազով ազգայնիկներու կողմէ. ասոնք իրական Յուդայներ են, իրական Յուդայներ են նաեւ այսօրինակ կատարածքի կամ ի-րական տուեալներով հակառակորդներ սեղնելու ձգտողներ:

Ամենամեծ արկութիւնն է Յուդան մատնացոյց ընել քրիստոնէա-կան Մեծ Վարդապետի բրածին պէս իսկ մեծագոյն առաքինութիւնն է, ա-ռանց յետին միտքերէ տարուելու, Յուդան ուղղութեան հրաւիրել:

Թէ որ հայ հաստատուած յուդայական արարքներու մէջ գտնուած է կամ կը գտնուի, զա շատ պարզ է և սակայն անկէ աւելի հայ իրականու-թիւնը շահագրգռող այժմէութիւնը յուդայութեան վերջ տալու և ազգային շահերու շուրջ մէկ ճակատ կարմելու անհրաժեշտութիւնն է:

Մէջ մէկ հայ կը համարակի թրքական կամ քրտական շահերը պաշտպանել յետին նպատակներով, զա յուդայութիւնն է. ոչ մէկ հայ կը խորհի հայկական օճախ մը ստեղծուած տեսնել Սուրիայ մէջ քանի կայ Հա-յաստանը և քաղաքացիական իրաւունքներ զմեզ կապած են Լիբանանի և Մուսթիպ:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՅՆԱԳԻՐ

Ինչպէս առիթն ունեցանք ասկէ առաջ գրելու, հոգատար կառավա-րութիւնը նպատակ ունի դաշնագիր-ներ կնքել Լիբանանի և Սուրիոյ հետ, պետական կայունացումով օժ-տելու համար զանոնք:

Պաշտօնական շրջանակներ թէ և կը ջանան հերքել նմանօրինակ դաշ-նագրի մը շուրջ քանակցութիւններ կատարելու ձեռնարկը, սակայն հո-գատար կառավարութեան այս ձեռ-նարկը չկորսնցնեն իր այժմէութիւ-նը:

Ինչպէս ուրիշ երկիրներու նմա-նապէս Լիբանանի շահերը կը պա-հանջեն որ իր յարաբերութիւնները ըլլան որոշ, որպէսզի երկու վերին իշխանութեանց հրահի զիրար խա-չաձեռող գործերուն տեղը չմնայ:

Յարաբերութեանց անստուգու-թիւնը արգարե վարանումը կը մատ-նէ Օրէնսդիր և Գործադիր Վերին Մարմինները իրենց իրաւասութեան սահմանին մէջ ինկած ո՛րէն գործի մը գործադրութեան ստիժ:

Երկրի վարչական մեքենայի բար-ւոք մատակարարութեան համար կա-րելի են Բ. Գոմիսէրութեան զանա-զան սպասարկութիւնները. իսկ հո-գատար և տեղական կառավարու-թեան համագործակցութիւնը հա-կառակ իր անհրաժեշտութեան, որոշ կանոններու ենթակա չէ. այս պատ-ճառաւ, անկախ իկի կ'առնուի տե-ղական շահերու անկասկածելի ան-կով: Վասնոր հոգատարութիւնը, որ ամենին էլ անկախ և նորապէս վար-չաձեռն է, ենթակա է գանազան եւ այլքի պէս ծածանող միջամու-թիւններու:

Այս անստուգութիւնը, որ հո-գատարական վարչութեան և քա-ղաքականութեան համար աննպաստ մի երեւոյթ է, պատճառ եղած է որ Յարաբերութեան հակառակորդները զանկա մարտասաններ իբրեւ կայունապաշտ և զաղխարարող:

Այս նկատուածով էր որ Խորհրդ-դարանի մէջ, առաջին անգամ ըլլա-լով, ձայն բարձրացաւ դաշնագիր մը կնքելու համար: Լիբանանի բո-լոր մասերու մէջ լաւ արձագանգ գտաւ այս ձայնը, ինչ որ հաճելի էր նաեւ հոգատար կառավարութեան, որ իր կարգին փափաքեցաւ իրա-գործել զայն:

Ի մօտոյ հաւանական է որ կըս-կանք քանակցութիւններ, որոնց ընթացքին բանակիցները պէտք է ունենան շրջահայեցութիւն, ուղղա-մտութիւն և հասկացողութեան ու-ղի, որպէսզի կարելի ըլլայ երկու զաշնագիր կողմերու, մասնաւոր տկար կողմի, իրաւունքները փրկել:

Ուղղամտութիւն, շրջահայեցու-թիւն և հակացողութեան ոգիով, վստահ ենք թէ պիտի առաջնորդը-լին Յարաբերութեան պատուարները, առանց երբեք անգրագիտութեան Ան-գլո-Իրագիտեան դաշնագրի մէջ իր-տանական կառավարութեան բռնած հակասական ձեւերուն:

Անկասկած է որ Յարաբերութեան սկզբունքներուն համա-պատասխան դաշնագիր մը կնքելու համար, պիտի կատարուի խնստ աշխատանք:

Բանակիցներուն վրայ պարտա-կանութիւն կը ծանցանալ խորհի թէ

ԲԵՄԲԵՐՈՒ ՑՐԻՈՒՄԵՆ Վ Ե Ր Զ

ԱՆԴՐ-ՆԱՂՐ ՈՐՈՒՄ ՄԱՅԱՐՈՅՆ

Հոգատար իշխանութեան մաս-նաւոր հրահանգով և տեղական կա-ռավարութեան հաւանութեամբ քա-ղաքիս Մուտաֆէր փողոցի ծովե-գերեայ երկայնքին վրայ, ութ տա-րիներէ աւելի իրենց բոյնը հաստա-տող 16,000ի մօտ հայութեան տախ-տակաշէն անակները մաս առ մաս կը քայքայուին ու կը քանդուին:

Տեղական մամուլը— մասնաւո-րաբար «Ահրար» օրաթերթը, երկար սինական իրաւիքներ քէմերու հա-կառողջապահական գրութեան մա-սին և կառավարութեան պահանջն-ցին որ, որ առաջ քանգել այս ան-հաճոյ անարար պատկերացնող խը-ճիթները:

Օտարները և օտար մամուլը գէշ տպաւորուած էին քէմերական ժո-ղովուրդի մասին, և, նոյնիսկ զա-նուեցաւ հայատառ թերթիկ մը, որ քէմերի հայ հասարակութեան հասցե-ին անպատուաբար անակները գոր-ծածել չ'ամնջաւ: Այս թերթիկի վայրագոյն կարծիքով քէմեր ան-բարոյականութեան, գինովներու, սրիկաներու, կուռքաններու օճախ մըն էր:

Անարգար վճիռ: Բէմբի տեսարանը լաւ չէր կ'ըն-դունինք:

Բայց, քէմեր բնակչութեան ա-ռաւելագոյն և ջախջախիչ տոկոսը իր կամքէն բոլորովին անկախ հոտ հաստատուած էր: Անոնց բոլորն ալ պահել ու պատուաւոր ընտանիքներ էին ու իրենց ծննդավայրին մէջ կ'պարէին սեփական ու փառաւոր շէնքերէ ներս եւ հանգստաւէտ կ'անք մ'ուենէին:

Իրիկեան վերջին արտագաղթը ամէն յոյս քանդեց. քանգեց միան-գամայն հայ ժողովուրդին տնտեսա-կանին հետ բարոյական ան-միջակաբերի էին:

Մոռնանք այդ տխուր յիշատակ-ները եւ գառնանք մեր այժմու վի-ճակին:

Հայ ժողովուրդի շինարար ոգին օտարներու իսկ լուրջ ուշադրու-թեան — չ'ընելու համար նախանշին-արժանացած է:

Այժմ, հոս, Լիբանանի սահ-մաններէն ներս հաստատուած ենք մեր հիմնական բոյները եւ դարձած ՀԱՐԱՋԱՏ Լիբանանցիներ: ՀԱՐԱՋԱՏ կը շէնտենք, որովհետեւ, մեր հա-մեստ կարծիքով, մեզի համար տար-բեր ելք չկայ եթէ ոչ յետ այսու (Շար. Բ. Էջ Բ. սինակ):

Յիշանք— Լիբանանեան դաշնագիրը արդարութեան և խաղաղութեան ի-բրը հիմ պիտի ծառայէ այնպէս որ անգլիական ոգիով պատրաստուած դաշնագիր մը ոչ միայն պիտի կըն-ճրուած արդէն գոյութիւն ունեցող դժուարութիւնները, այլ պիտի ըս-տեղծէ նորանոր բարգաւթութիւններ:

Դաշնագրի վերջնական կարգադ-րութիւնը կախուած է Բ. Գոմիսէ-րի վերադարձին, որ Յարաբերութեան իրաւագրանի մէջ ներկայ պի-լը-լայ առ-այս կատարուելիք հարցա-պնդումներու ու վիճարանութեանց:

ԿՍՄԻՐՆԵՐ

ԵՐԷԿ ՏԿԱՐ ԱՅՍՈՐ ԶՈՐԱԽՈՐ

Կը պատմուի թէ Արարչագործը իսկզբան շատ տկար ստեղծած էր եւ սակայն անոր աղաղուն մարմինն մէջ տեսնելով ազնիւ յատ-կութիւններ և ուրիշներու վրայ տի-րապետելու զօրաւոր մարմալ մը, ներքին գեղջ մը, պղտիկ խղճահա-րութիւն մ'ուենցած թագաւորական ձեւով օժտուած արարած մը ար-խեղծ մարմնով օժտած ըլլալուն հա-մար: Իւ Արարիչը, որ իր արարած-ներուն առաջնորդը եղած է միշտ անոնց մէջ ստեղծած բարի գեղացում-ներով, առիթի մը կ'սպասէր իր սը-խալը ողբագրելու համար:

Առիւծը, հեռաբախ ու աշա-լուկ, պատկած էր իր որջին մէջ, երբ անասուններն սկսան գող ան-ցել անոր առջեւէն — հեղեղ զինքը. իր արժանապատուութիւնը խորագէտ վերաւորուած զգալով և չկարենա-լով հանգուրծել իր նմաններու հեզ-նախառն նախադիմանքներուն, առիւ-ծը պահ մը մոռցած իր տկարութիւ-նը, զայրացաւ, ամփոփեց ամբողջ կորովը, ֆիլիքական ու բարոյական եւ իր ոտնաձայն գոռուով խոյա-ցաւ իր նախատեղիներուն վրայ, ու-րոնք ահաբեկ, վայրկեանաբար ցի-րուցան եղան:

Արարիչը, որ կը զիտէր այս տե-սարանը, հասած համարելով իր նա-խադասմանը պատիժի վախճանը, իր արարածային պատգամով երկու-ան տկար առիւծը փոխեց այսօրու-ան ամենազօրաւորին իր նմաննե-րուն տիրելու հանգամանքով օժ-տուած:

Այս շինիչ առածը կը մտաբե-րեմ ամէն անգամ որ բաւական կեն-դանիներ կուգան հեղեղ իրենց տը-կար ցեղակիցները ոչ միայն ծան-րացնելով անոնց ցաւերը այլ նաեւ մեղանշելով իրենց մարդկայնական պարտականութեանց զէմ:

Աշխարհը սկիզբէն իվեր թատե-րափայլը այս ցաւալի իրականու-թեան, զօրաւորներ իշխող հեղեղ-անարգած ու ոտնաձայնած են տը-կարները մինչեւ որ անոնցմէ ոմանք հետեւելով անարգուած առիւծի օ-րինակին, հարկադրուած են իրենց ցաւերը դարձանել իրենց սեփական միջոցներով:

Այս ճշմարտութեան ցայտաւ-մէկ օրինակը կուտայ ներկայիս տա-րագիր ու ցիրուցան Հայ ազգը, թր-քական գաւառներէն զէպի Սուրիա ապաստանող անսուղ ու կիսամերկ ազգայնիկներու կարկառելով եղբայ-րական ձեռք:

Իսկ եթէ ազգային կարգ մը ար-մատացած ցաւերու հանդէպ ալ ար-մատական ու ամենափրկարար դար-մանովին այս եղանակը, գործանք անվարան կրնամ ըսել թէ հաւաճա-կան ու իսփիւռաւ աշխարհի վտա-րանդի հայ ազգը պիտի արժանանայ ատաւաճածայի այն անփոխարինելի շնորհի որով երէկսուս տկարակա-զրմ առիւծը եղաւ այսօրուան զօ-րաւոր առիւծը:

ՕՏԵԱՆ ՈՐԴԻ

ԿԱՐԻԱՑԷՐ

ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՐ

«ԱՐԱՐԱՆ» «ԶԱՅԱԹԵՐԹ»

ኮ ኄ ዒ በ ኮ . . .

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

ՆԱՀՐԻ ՊԱՐԱԳՆԵՐԸ

Առաջնորդարանի Դիւանը
կը հաղորդէ մեզ—

«Լիւրան»-ի պատ. ընթերցող-ները կը յիշեն անշուշտ որ, Առաջ-նորդարանին կողմէ քանի մ'օր առաջ պատեն առիթ մը բերանացի թէ զբ-րաւոր խնդիր մատուցուած էր Վ. Բ. Գոմիսէրի ծանօթեցումը, յետագայում հա-մար քանդուածը նահրէն անդին թը-րիւթիւնի ճամբուն երկու եղբայրքը բը նակող հայերու պարագնորուն, որը տեղի պիտի ունենար ամառայ սկիզ-բը, ըստ կանխորոք տուած հրամա-նի:

Ուրախ ենք յայտնելու որ, ն. վ. Բ. Գոմիսէրը բարեացակամօրէն նկատի առած է Առաջնորդարանի խնդրանքը եւ Ընդհ. Բարեօրոգարու թեան 7725 թուականմար եւ 3 Նոյեմ-բեր 930 թուականի նամակով կը բա-րենաճած է իմացնել ընդհանր պարագա-յին որ, խնդիր առարկայ պարագ-ներուն տեղերը անհրաժեշտ փաստե-րով կապացուցանեն որ, այժմէն հե-տաւորուն են կանոնաւոր ստան կամ սենեակ վարձելու քաղաքին մէջ, կամ հող ու տեղ քննելու յարմար վայրեր եւ զարանամուտին կանո-նաւոր տնակներ շինելով հոն փոխա-գրուելու, իրենց պարագներուն ձեռք չի պիտի դադուր իսկ անոնք որոնք անհող կը մնան ու ունէ պատ-րաստութիւն չեն տեսներ այս մը-տօք, պիտի ստիպուին մաս առ մաս քանդել իրենց պարագները:

Արդէն Առաջնորդարանին կողմա-նէ յայտուել Յանձնախումբ մը կազ-մուած է տեղւոյն վստահելի եւ պա-տուաւոր անձնաւորութիւններէն, ու-րոնք ստացազրի փոխարէն պիտի տնայնիկ հող գնել ուղղուենք միա-րուանելու եւ յանձնեն Առաջնորդա-րան օրը օրին, արդէն զանաւոր ու յանձնուած է 225 Օսմանեան հնչու-նակի:

Ձայն վերցնանելով, կը յարկա-գրենք թէ նահրի հայ բնակչութիւնը մասնաւորապէս եւ թէ միւս պարա-գարանի ժողովուրդը առ հասարակ. որ փութան օգտուել իշխանու-թեանց այս բարի տրամադրութենէն եւ մաս առ մաս յարմար եւ հաստա-տուն բնակարանի տեղ ըլլան:

Ձեկայց ազգային

Առաջնորդարանի

Տարւոյն Յունիսին սկիզբները հոգատար կատարութիւններ խնդր-ուած էր մինչեւ այն ատեն արտօ-նագիր չունեցող հայ վարժարաննե-րու արտօնագիրը տալ ուղղակի կաթ. փոխանորդ Սրբազան Հօր. Առաջ-նորդարանի անմիջական հսկողու-թեան տակ ունենալու:

Վերջինս պէտք տեսնուելով բո-լոր հայ վարժարաններուն թուով 19 տարեկանութիւնը նոյնպէս փոխանցել Սրբազան Հօր անուան, երկրորդ խնդրագիր մըն ալ մատուցուեցաւ. եւ ուրախ ենք յայտարարելու որ ի պատասխան ստացուեցաւ Ընդհա-նուր Բարեօրոգարութեան 7725 թու-ականմար եւ Նոյմ. 3 թուականի հա-մանագիրը, որուն պատճէնը ստորեւ նոյնութեամբ կը հաղորդենք իդի-տութիւն բոլոր թաղական եւ հոգա-բարձական մարմիններուն:

Պ Ա Տ Ճ Է Ն

Որոշմանգիր Թիւ 2262

Յօդ.— Տ. Եղիշէ Արքեպի-կարօսեան կաթող. փոխանորդ Լիբա-նանի հայոց. ըստ իր խնդրանքի ար-տօնուած է վարելու տնօրէնու-թիւնը Օրթօօքս հայերու հետեւեալ վարժարաններուն:

- 1.— Հայ Ազգ. վարժարան ի Մօրիս Պարէն փողոց Պէյրութ,
- 2.— Հայ Ազգ. վարժ. ի Նոյն Միշէլ
- 3.— » » ի Լազարէթ
- 4.— » » ի Եղիշէ Բիշէ
- 5.— » » ի գետակ Պէյրութի

(Պուրճ Համուս)

- 6.— » » Պէյրութ — Բըմէլէն
- 7.— » » Մազրաս
- 8.— » » Սէն — Էլ — Թիւ

- 9.— » » Ճուշիէ
- 10.— » » Ճուշի
- 11.— » » ի Ղազիր
- 12.— » » ի Պ քաղաք
- 13.— » » ի Սայուն
- 14.— » » ի Տիւրոս
- 15.— » » ի Սէլ
- 16.— » » ի Զահլէ
- 17.— » » ի Րայաք
- 18.— » » ի Պասլ — Պէք
- 19.— » » ի Թիփօրի

Յօդ.— Ներկայ որոշումը կը չնչն բոլոր նախորդ որոշումները սոյն դպրոցներու մասին տրուած: Յօդ. — Ընդհանուր Բարեօրոգ-արութիւնը պիտի հսկէ այս որոշ-ման գործադրութեան: Պէյրութ 3 Նոյեմբեր 1930 Տեսնուած Փոխ. Բ. Գոմիսէր Փոխ. Ընդհ. Բարեօ. (ստոր) Տ. Թիփօրի 2. ՀՈՐԲԸՆՈ

Հ. Բ. Ը. ՍՈՒԹԵԱՆ ԲԵՂ. Մ. ՃԻՂԸ

Հ. Բ. Ը. Միւսիւսի Տեսնուած Մ. Ճիւղի վարժութիւնը յաւաք. ին կարգադրութիւնը ըրած է ամառվը-նայինը զանաւոր գործը լուա-գոյնօրէն կարգադրել: Նախկին գա-նձիչն ուրիշ մը յանձնելով սոյն կա-րեւոր պաշտօնը: Մենք կը թիւա-գրենք Բարեօրոգարանի բոլոր հա-մակերներուն մասնաւորաբար եւ ամ-բողջ Պէյրութահայութեան առհասա-րակ, առանց կուսակցական ներմը-տութեան եւ առանց յարանուական խտրութեան, անկամագրութեան ի-րենց նիւթական աշակցութիւնը ըն-դլանան մասնաճիւղին:

ՊԱՏՈՒԱՆԵԱՆ

Ճիւղաւ Է. Պալիթ Տեղեկատ-նի սիրուած թարգման, Սուրիական պատուանշանի արժանացած է, մա-տուցած բարեօք ծառայութեանը համար:

ՀԱՄԵՐԻ ԿԻՆԼՊԵՆԵԱՆ ՎԱՐԺԸ

Հալէպի Ազգ. Պաշտոն Կիւլպէնի-եան վարժարանի Հոգաբարձութիւ-նը կազմուած է հետեւեալ ազգային-ներէն: Տիւրք, Գրիգոր Աղիւրեան Նազարէթ Յարապեան, Արշակ Գա-լէմբարեան, Անանիկ Էմբերեան եւ Սուրէն Գալէմբարեան:

ԿԱՅՈՒՆԿԱՍԱՐԱՆ

Անթիլիանի կաթողիկոսարան — Ընծայարանը իր կանոնաւորութեան մէջ մասնի սկսած է: Հիմուն Աստու-ածարան Գրի. Շահէ վարդապետ ըն-ծայարանի զատնիքները կը ըն-րունակէ աշխուժել նորաշէն եկե-ղեցին բարեգործելու համար անհը-րաժեշտ կարգադրութիւններ կ'ըլլան եւ վեհափառը ուշի ուշով կը հսկէ բոլոր շարժումներուն:

Փառմիս - Գերման Եւրոպայի թիւ
Բարեգ.— Արաբից Գործից Եւրոպայի թիւ
ման դիւանը Մ. Հօր. այս առաւ սեպտեմբերին մը ունեցան:

ՕՐԱՑՈՅՑԻ

ՄԻՐԱՀԱՐԱՆԵՐՈՒՆ

Տպարանի յոյս տեսած են մա-քուր ու խնամեալ տպագրութեամբ 1931 տարւոյ մեծաքանակ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԻՆԵՐ

զոր յոյժ դիւրամատչելի գիներով եւ ուրիշներու կողմէ առաջարկուած գինէն 20% զեղծով մը պատրաստ ենք տրամադրելու շահագրգռող Հայր. Միւսիւսի, Ազգ. վարժա-րաններու Պատասխանատու Մար-միններու, եւ բոլոր շահագրգռող Ազգայիններու:

Այս անախարձաց առիթն օգ-տուելու համար, կը խնդրուի գիմել մեզ մինչեւ 30 Նոյեմբեր:

ՎՊՐՁՈՒԹԻՒՆ

ՎՊՐՁՈՒՆ ԶԱՅԱԹԵՐԹԻ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պ. Ժ. Ժամկոչեան.— հա-նցե՛ք ձեր պատգմը եղող 700 Ա. Դանեկանը անմիջապէս փու-քացնել մեզ: Ձերին Տիւրքի հանգամանքին չենք վայելեցներ:

— Պ. Մանուկ Կեօկեան.— Ձեր թերթին բաժնեգիրը եղող 500 ս. դ. պարտքը փութացուցէք:

Ա Զ Դ

Յառաջիկայ Կիր. 16 Նոյ. հա-նուար Սուր. անձա՛ պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Լիբա-նանի կաթ. Փոխ. Գիւլ. Տ. Կիւլէ Արք. Կարօսեան: Կը հրաւիրուի մեր բա-րեպաշտ Ժողովուրդը ներկայ գրա-նուել Ամանոս քէմրի Ս. Երրորդօ-թեան եկեղեցին:

ԹԱՂ. ԽՈՐՀ. ՀԱՅՅՈ

ԱՄԱՆՈՍ ԲԵՂԻՆ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՈՂ ԵՆՔ

Գաղութիւն Ազգ. Երկու Վար-ժարաններուն Ընդհ. Տնօրէնութեան գործը Առաջնորդ Սրբազան Հօր յան-նուար խնամ զօհ ենք, ինչպէս որ այս թիւով պաշտօնագրուած է մեզ: Կը մաղթենք որ այլեւ վերջ տրուի ինքնակոչ մարդոց ինքնահաւան կա-զազրութիւններուն:

Ինչ որ կը տեսնենք, Սրբազան Հայրը կատարեալ լիազօրութեան ու-նի իր պատշաճ նստած ձեռով կա-զազրել Ազգ. վարժարաններուն վե-րաբերող ամէն խնդիր:

= 36 =

սկսած մեծ քայլերով երթալ գալ սենեակին մէջ. — Ինչո՞ւ համար այս ստահակը, զոչեց վայրկեան մը վերջ, յարձակած է այնքան անխոցելի որքան գոհարատանելի արձանի մը վրայ: Ո՛ւրիշ ներս մը-տած ու ուրիշ գուրս ելած է: Վստահ եղիր չի պի-տի ուշանա տեսնելով իր վերերեւոյն:

Եւ իր գրասեղանին վրայ դրուած նամակ մը առ-նելով: — Կարգա՛ սա երկտողը, ըսաւ երկարելով գայն իր աղջկան:

Գոյնթ առաւ նամակը որ սպայէ գրուած էր. «31 Տ' Անիէն պողոտայ

Հեռ. Էլիզէ 86,2

Սիրելի Պարոն Շանթըքօք,

Ձեռնաստեղծած արգելք մը կ'ստիպէ զիս խնդրել ձեռնէ որ բարի ըլլաք կէս օրէ յետոյ ժամը 3 ին յե-տաճիւլ ժամագրութիւնը զոր տուինք երէկ Լուվրի մէջ:

Թարգմանք

ԺԱՔ ՊԵՂԻՆ

«Աշխատեցայ հեռաձայնով խօսիլ... բայց ան-կարելի եղաւ յարաբերութիւն հաստատել: Ահա թէ ինչո՞ւ կը զրկեմ այս երկտողը, կը յուսած թէ Ժա-նանակին կը հասնի ձեզ»:

— Շնորհիւ է զոչեց Շանթըքօք, հեռաձայն ուղարկութիւնը երթալով վատթարանալու վրայէն բողբ պիտի ուղղեմ:

— Բան մը մի ընեմ հայր, ես էի ընդունարանը անշուշտ, ըսաւ Գոյնթ:

— Ինչո՞ւ հարցուց հայրը:

— Այնչափ ուշ եկար եւ այնչափ խոր կը քը-նանայիր որ չուզեցի տեսնելու ընդ զեզէ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրագիլական կառավարութեան նամակումը

Բարիգ.— Քրանսաւ ան կառավարութիւնը կը ճանցնայ Պրագիլական առժամեալ կառավարութիւնը:

— Վաշինկթըն.— Միացեալ Նահանգներ կը ճանցնան Պրագիլական առժամեալ կառավարութիւնը:

Վենիզելու Լուսանկարը Նուիրած է

Ի Ս Ս Է Թ Փ Ա Յ Ա Յ Ի

Աթենքի թերթերուն համաձայն, Էնկիւրիէն մեկնել առաջ, Վենիզելու իր լուսանկարը նո իրած է Իսմէթ փաշայի եւ վրան ձեռագիրով գրած. «Ի յիշատակ պատմական իրադարձութեանց, որոնք նուիրագործուեցան մեր ստորագրութիւններով»:

Փանկալոս բանտ նետուեցաւ

Աթենք.— Ընդհ. դատախազի ձեռքակալման հրաժարումից փրայ, Ջոր. Փանկալոս ձեռքակալուեցաւ եւ Սիմկոսի բանտը նետ-ուեցաւ:

Ձեի Արտ. Նախարարը Աթենք կ'այցելէ

Աթենք.— Աթենքի Ձեիօպօլաֆ դեսպանը երէկ արտաքին նախարարին այցելելով, յայտնեց թէ չեի արտաքին նախարար Պր. Պէնէ Ենոյմբերի վերջը կամ Դեկտեմբերի սկիզբը Աթենք պիտի այցելէ իր փոխ այցելութիւն Պ. Վենիզելուի:

Եգիպտ. Ընտրութիւններուն Դէմ Պոյֆօք

Գանիք.— Ազատական եւ ազգայնական (Վաճ) գոր-ծադիր մարմինները որոշեցին պոյֆօք հռչակել երեսփ. ընտրութիւն-ներուն դէմ, որոնց պիտի ձեռնարկէ վաշայեց Սրբ. փաշա, ընտրական վերջին օրէնքին համաձայն:

Փոթորիկի Աւերներ

100 մեռեալ, միլիոններով վնաս

Նանք.— Երեւ օր տեղով փոթորիկ մը խորակեց վերջերս աւարած թուրք մը, որ շինուած էր ծովուն դէմ պաշտպանելու համար 20,000 հէկթար սարածութեամբ նախնախոս մը Վանսէի մէջ: Վնասը 4 միլիոնի կը հասնի:

Սայկոն.— «Ինսօփապիթի» գործակալութեան համաձայն, Փուլօ եւ Փօլօր կողմերուն մէջ զարհուրելի ծովամարտի մը ան-աւերներ գործած է: Մինչեւ հիմայ 100ի չափ դիակներ հանուած են աւերակներուն տակէն:

Հայ Մը Ձերբակալուած Սակարանի Գործով

«Ազատ» կը գրէ թէ դրամական սակարանին մէջ խաբեարութիւն մը երեւան հանուած է Պ. Գրիգոր անուն մէկը ձերբակալուած է, զրամներու ընթացքին կեղծ ցուցակ մը պատրաստած ըլլալուն համար: Պ. Գրիգոր ոս-տիկանութեան կողմէ բռնուած է կեղծ ցուցակները ծախելու միջոցին, ու-րոնցմով քանի մը վաճառատուներ ալ խաբած է. Պ. Գրիգոր Դատական իշխանութեան յանձնուած է:

= 33 =

— Շանթըքօք. Մեծն Շանթըքօքը, զաղտնի ոտակականներու թագաւորը...

Է.

ԳԱՂՏՆԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ

Այս տարօրինակ անձը, որ կուգար անակնկալ-ութեան դեր մը խաղալու Լուվրի տրամին մէջ. ուստի մէկը չէր եթէ Ընդհ. Ազատութեան նախկին գոր-ծակալ մը որը պատրաստէն առաջ չնորհիւ իր բազ-մաթիւ եւ աղմկալից արարքներուն, շահած էր ճշ-մարիտ համբաւ մը:

1914 ին զինուորագրուած, իբր պահեստի սպայ Շանթըքօք քաջարար կուռել է եւ Պատուի Լէգէոնի ու պատերազմական խաչի արժանանալէ վերջ, կո-չուած էր անգէն ծառայութեան եւ ձեռնարկած հե-տապնդելու լրտեսները, արժանանալով ժողովուրդա-կան հերոսի մը գիրքին:

Ձինազադարէն յետոյ հրաժարականը տուած եւ իր հաշտոյն գաղտնի ոստիկանութեամբ սկսած էր ըզ-րաղիլ:

Իրեւ քարտուղար կամ աւելի ճիշտը գործակիւր առած էր իր աղջիկը գեղանի Գոյնթը, որ իր հօր Ժիջոյաւ գեղարուեստի մը վերածուած աղուստի մը շուտով հրապարակուած էր:

Շանթըքօք անհրժան ոստիկան մը ըլլալով հան-գիւրդ չափազանց քաջ եւ պարկեշտ մարդ մըն էր ընդհանուրին փտահոսութեան ու յարգանքին արժանա-ցած:

Ապահոված էր ընտիր յաճախողներ որոնց կը ծառայէր յաջորդութեամբ պատուաւորութեամբ, ի-մապատեմեամբ եւ ետեւեալով:

